

**Ավագ դպրոց  
Քիմիա. սովորողի ընտրությամբ խորացված ուսուցման դասընթաց  
Ծրագիր**

Ուսումնական նախագծեր

*Վատ ուսուցիչը դասավանդում է փաստեր, իսկ լավը՝ սովորեցնում է փնտրել և գտնել  
Ա. Դիստերվեզ*

Ավագ դպրոցում քիմիայի խորացված ուսուցման դասընթացը բաղկացած է երեք՝  
**ընդհանուր, տարրերի և օրգանական քիմիա** բաժիններից: Ուսուցումը կազմակերպվում է  
ուսումնական նախագծերով:

**Ուսումնական նախագծերի ընտրություն**

1) Առանձնացվել են **ընդհանուր քիմիայի**, հատկապես, **ֆիզիկական քիմիայի**, հիմնարար խնդիրները. ինչո՞ւ են ընթանում քիմիական փոխարկումները, ի՞նչ աստիճանով (դարձելի ռեակցիաներ) և ինչպիսի՞ արագությամբ: Այս հարցադրումներին կարելի է պատասխանել ֆիզիկական քիմիայի այնպիսի բաժինների օգնությամբ, ինչպիսիք են՝ քիմիական թերմոդինամիկական և կինետիկական, մոլեկուլի կառուցվածքի ժամանակակից տեսությունը, կատալիզատորներ, լուծիչի դերը քիմիական ռեակցիաների ընթացքում և այլն:

2) Շեշտադրվել են այն հարցադրումները, որոնք **վերջնական պատասխան չունեն**, օրինակ՝ մոլեկուլի տարածական կառուցվածքի և ռեակցիոնակության կապը (երկրաչափական և օպտիկական իզոմերներ, բնեռային և ոչ բնեռային մոլեկուլներ), ատոմը կազմող տարրական մասնիկները, Լայնուս Պոլինգի ատոմային օրբիտալների հիբրիդացման տեսությունը, քիմիական կապի վալենտային զույգի էլեկտրոնների էլեկտրաստատիկ վանման մոդելը, հիմքերի և թթուների տարբեր տեսությունները և այլն:

Ավագ դպրոցի քիմիայի խորացված ուսուցման **ամբողջ դասընթացը** բաժանվել է 13 մոդուլների՝ նախագծերի, որոնք կազմված են ենթաթեմաներից:

- **Ընդհանուր քիմիա** - 5 նախագիծ
- **Տարրերի քիմիա** - 2 նախագիծ
- **Օրգանական քիմիա** - 5 նախագիծ
- **Քիմիա գիտության դերը մարդկությանը հուզող հիմնախնդիրների լուծման գործում** - 1 նախագիծ







**Ծրագրում ներկայացվող ուսումնական նախագծերի բովանդակությունը.**

- 1) նախագծի անվանումը, ենթաթեմաները, կարճ բովանդակությունը
- 2) նախագիծը իրականացնելու համար անհրաժեշտ ժամանակահատվածը
- 3) նախագծի հիմնավորումը՝ բովանդակային համապատասխանությունը ուսումնական չափորոշիչներին
- 4) ուսուցման արդյունքները՝ նախագծի նպատակը և խնդիրները
- 5) ուղղորդող հարցերը՝ գլխավոր, թեմատիկ և ըստ էության հարցեր
- 6) տեղեկություններ նախագծի վերաբերյալ՝ անհրաժեշտ նախնական

**«Միխիթար Մերաստացի» կրթահամալիր**  
Ստեղծողի մտքի դպրոց. անհատի կրթական պատվեր

- գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, ուսումնական միջոցներ
- 7) ուսումնական նախագծեր, որոնք սովորողները կարող են ընտրել անհատապես կամ երկուսով կատարելու և ներկայացնելու համար
- 8) գնահատման մեթոդիկայի նկարագրությունը՝ մինչ նախագծի վրա աշխատելը, աշխատելու ընթացքում և ավարտելիս:










**Ուսումնական նախագծեր. 10-րդ դասարան**  
**Ընդհանուր քիմիա (80 ժամ)**

<p><b>10-1</b> <b>Նախագծի անվանումը</b></p>	<p>Մարդկությանը հուզող հիմնախնդիրները: Քիմիա գիտության դերը հիմնախնդիրների լուծման գործում</p>
<p><b>Նախագծի կարճ բովանդակությունը</b></p>	<p>Էներգետիկ, առողջապահական, խմելու ջուր, էկոլոգիապես մաքուր սնունդ, մաքուր օդ, հագուստ, շինանյութեր, պարարտանյութեր և այլն: Քիմիայի տեսական, գործնական և կիրառական գիտություն լինելու հանգամանքը որպես տնտեսության զարգացման կարևորագույն գործոն: Առողջ ապրելակերպի սկզբունքները և սովորողի օրվա, շաբաթվա, ամսվա աշխատակարգը:</p>
<p><b>Ուսումնական առարկան, բաժինը</b></p>	<p>Քիմիա, ընդհանուր քիմիա</p>
<p><b>Սովորողները</b></p>	<p>Քիմիայի խորացված ուսուցման խումբ</p>
<p><b>Նախագիծը իրականացնելու համար անհրաժեշտ ժամանակը</b></p>	<p>4 ժամ, մեկ շաբաթ</p>
<p><b>Թեմայի հիմնավորումը, նպատակը</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>✓ ծանոթացում միմյանց, ծրագրի, աշխատակարգի հետ</li> <li>✓ անկաշկանդ գրույցի ձևով «ստուգել» սովորողների պատրաստվածության մակարդակը և մնացորդային գիտելիքները անհատական աշխատանքը կազմակերպելու համար</li> <li>✓ կազմել սովորողի աշխատակարգը</li> <li>✓ վստահություն ներշնչել սեփական ուժերի նկատմամբ, գլխավորը երկրորդականից տարբերելու կարողություն և հետևողականություն</li> </ul>
<p><b><u>Ուղղորդող եռյակ հարցեր.</u></b>   <b>Գլխավոր հարց →</b></p> <p><b>• Թեմատիկ հարցեր →</b></p> <p> <b>Ըստ էության հարցեր →</b></p>	<p>Որո՞նք են մարդկությանը հուզող հիմնախնդիրները:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Որո՞նք են էներգիայի այլընտրանքային աղբյուրները:</li> <li>• Ո՞րն է համարվում մաքուր խմելու ջուր:</li> <li>• Ո՞րն է էկոլոգիապես մաքուր սնունդը:</li> <li>• Ի՞նչ կարծիք ունեք կենսական միջավայրի մասին:</li> <li>• Որո՞նք են առողջ ապրելակերպի սկզբունքները:</li> </ul> <ul style="list-style-type: none"> <li> Ինչո՞ւ են նավթը համարում «սև ոսկի»:</li> <li> Ինչո՞ւ է ջրածինը համարվում ապագայի վառելանյութ:</li> <li> Ինչո՞ւ խմելու ջուրը չի կարելի վարակազերծել քլորով:</li> <li> Ինչո՞ւ են հողին տալիս պարարտանյութեր:</li> </ul>

**«Միլիթար Սերաստացի» կրթահամալիր**  
Ստեղծողի մտքի դայրոց. անհատի կրթական պատվեր

	<ul style="list-style-type: none"> <li>✶ Ինչո՞ւ է անհրաժեշտ քնել մոտավորապես 8 ժամ:</li> <li>✶ Ինչո՞ւ են ամռանը հագնում բաց գույնի հագուստ և այլն:</li> </ul>
<b>Տեղեկություններ նախագծի վերաբերյալ</b>	<ul style="list-style-type: none"> <li>❖ Մտազրոհի ռազմավարությամբ «ստուգել» յուրաքանչյուր սովորողի պատրաստվածության մակարդակը և մնացորդային գիտելիքները բնագիտություն, քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն առարկաներից:</li> <li>❖ Ուսումնառության ընթացքը. <b>2 ժամ</b> - քննարկել հիմնախնդիրները, հանձնարարել ենթաթեմաները կարճ ներկայացնել, կազմել անհատական աշխատակարգ <b>2 ժամ</b>- հակիրճ ներկայացնել իրենց նկատառումները հիմնախնդիրների վերաբերյալ, անհատական աշխատակարգը</li> </ul>
Ուսուցման միջոցներ	<p>Տպագիր և մեդիագրականություն.</p> <p><a href="http://www.teleschool.spb.ru">http://www.teleschool.spb.ru</a>  <a href="http://www.chemistry.bsu.by/abc/">http://www.chemistry.bsu.by/abc/</a> <a href="http://c-books.narod.ru">http://c-books.narod.ru</a>  <a href="http://www.mendeleev.nw.ru/solutions/index.html/">http://www.mendeleev.nw.ru/solutions/index.html/</a>  <a href="http://www.chem.isu.ru:/eos/">http://www.chem.isu.ru:/eos/</a> /<a href="http://www.pandia.ru/text/77/389/24524.php/">www.pandia.ru/text/77/389/24524.php/</a></p>
Գնահատում	Գնահատվում է սովորողի մտածելու, համադրելու, տարբեր տեսակետներ հայտնելու, իր տեսակետը ձևակերպելու և գիտական փաստերով հիմնավորելու՝ օգտվելով տարբեր սկզբնաղբյուրներից, նաև իր փորձից, ունակություններից:

<b>10-2</b> <b><u>Նախագծի անվանումը</u></b>	<b>Քիմիան փորձարարական գիտություն է</b>
<b><u>Նախագծի ենթաթեմաները և կարճ բովանդակությունը.</u></b>	Սովորողներին ծանոթացնել լաբորատոր ամանեղենի, սարքավորումների և անվտանգության կանոնների հետ: Մալիբուսյոյոցի կառուցվածքը և լիցքավորումը: Այրման ռեակցիաների դիտարկում և համեմատում՝ լուցկու, մագնեզիումի, էթիլալիբուտի, մոմի և հեղուկ գազի: Բոցի կառուցվածքը: Բնութագրել նյութերի ֆիզիկական, քիմիական և ֆիզիոլոգիական հատկությունները: Խառնուրդներից ստանալ մաքուր նյութեր՝ տարբեր բաժանման եղանակների կիրառմամբ և հիմնավորել նյութի մաքրությունը: Անօրգանական և օրգանական նյութերի մասնակցությամբ ընթացող ռեակցիաների ընթանալու պայմանների և արտաքին հատկանիշների դիտարկումը: Բնութագրել ֆիզիկական և քիմիական երևույթները:
<b>Ուսումնական առարկան, բաժինը</b>	Քիմիա, ընդհանուր քիմիա
<b>Սովորողների տարիքը, դասարանը</b>	14, 15 տարեկան, 10-րդ դասարան (մասնագիտական խորացված ուսուցում)
<b>Նախագիծը իրականացնելու համար անհրաժեշտ ժամանակը</b>	12 ժամ, երեք շաբաթ
<b><u>Թեմայի հիմնավորումը, նպատակը և խնդիրները.</u></b>	Սովորողներին ծանոթացնել հետազոտման գիտական մեթոդներին՝ ելնելով քիմիային առնչվող հասարակական հիմնախնդիրների լուծման փորձի ուսումնասիրումից, բացատրել, որ գիտական հասկացությունները ձևավորվում են փուլերով և հիմնվում են դիտարկումների, փորձերի, փաստերի վրա, կատարվում են բազմակողմանի վերլուծություններ, ինչը

	<p>նպաստում է եզրակացություններ կատարելուն և ընդհանրացումներին. ձևակերպվում են կանոններ, օրինաչափություններ և օրենքներ: Քիմիան որպես դասավանդվող առարկա ունի հարուստ հնարավորություններ, քանի որ քիմիան փորձարարական գիտություն է՝ հիմնված գիտական մեթոդի վրա: Ուստի սովորողների ճանաչողական գործունեությունն ակտիվացնելու համար կարևոր է քիմիական փորձի կազմակերպումը և կուլտուրայի ձևավորումը՝ անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը, փորձարարական հետազոտությունների մշակումը, փորձի ընթացքի ապահովումը և դիտարկումների արդյունքում ծանրակշիռ տեսական եզրահանգումների վերհանումը: Ուսուցման արդյունքում սովորողը.</p> <ul style="list-style-type: none"> <li>❖ կիմանա ինչո՞վ է զբաղվում քիմիան</li> <li>❖ խորհրդավոր «ինչո՞ւ» հարցերին կգտնի պատասխան</li> <li>❖ կձևավորվի փորձարար-հետազոտողի կերպարը՝ յուրացնելով հետազոտական տարբեր մեթոդներ:</li> </ul>
<p>Եռյակ հարցերը.   <b>Գլխավոր հարց</b> →</p> <p>• <b>Թեմատիկ հարցեր</b> →</p> <p> <b>Ըստ էության հարցեր</b> →</p>	<p><b><i>Ո՞րն է քիմիայի ուսումնասիրման առարկան</i></b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Ինչո՞ւ է անհրաժեշտ պահպանել անվտանգության կանոնները նյութերի հետ աշխատելիս, նաև կենցաղում:</li> <li>• Նյութերի ինչպիսի՞ հատկություններ գիտեք:</li> <li>• Ինչպիսի՞ երևույթներ գիտեք:</li> <li>• Ինչպիսի՞ արտաքին հատկանիշներով էք համոզվում, որ տեղի է ունեցել քիմիական փոխարկում՝ ռեակցիա:</li> <li>• Խառնուրդներից մաքուր նյութերի ստացման ինչպիսի՞ բաժանման եղանակներ գիտեք:</li> <li>• Ո՞րն է համարվում մաքուր նյութ:</li> </ul> <ul style="list-style-type: none"> <li> Ի՞նչ է քիմիական երևույթը. ինչո՞վ է այն տարբերվում ֆիզիկական երևույթից:</li> <li> Ինչպիսի՞ երևույթ է այրումը՝ ֆիզիկական, թե՞ քիմիական:</li> <li> Այրելիս նյութն անհետանո՞ւմ է:</li> <li> Ինչո՞ւ դիտարկված այրվող նյութերի բոցի պայծառությունը տարբեր է:</li> <li> Ինչո՞ւ է ջրածինը այրվում պայթյունով:</li> <li> Որո՞նք են քիմիական ռեակցիաների ընթանալու պայմանները և արտաքին հատկանիշները:</li> <li> Ինչպե՞ս կհիմնավորեք ձեր ստացած նյութի մաքրությունը:</li> </ul>
<p><b><u>Տեղեկություններ նախագծի վերաբերյալ.</u></b></p>	<ul style="list-style-type: none"> <li>❖ Մտազրոհի ռազմավարությամբ «ստուգել» յուրաքանչյուր սովորողի պատրաստվածության մակարդակը, մնացորդային գիտելիքները՝ ֆիզիկական մարմին և նյութ; պարզ (մետաղներ և ոչմետաղներ) և բարդ՝ անօրգանական և օրգանական նյութեր; փորձեր կատարելու հմտությունները</li> <li>❖ Ուսումնասիրության ընթացքը.</li> </ul> <p><b>1-2-րդ դաս</b> – ծանոթացնել լաբորատոր սարքավորումների և քիմիական ամանեղենի(տեսակները, անունները, լվանալը և չորացնելը) հետ; լաբորատոր կշեռք և կշռումը; պահպանել անվտանգության կանոնները ակալիների, թթուների, թունավոր, այրվող(բռնկվող) և պայթյունավտանգ նյութերի հետ աշխատելիս; տաքացուցիչներից բացատրել սպիրտայրոցի կառուցվածքը, լիցքավորումը, ինչպես վառել և հանգցնել, փորձանոթում</p>

	<p>ջուրը տաքացնել, հանձնարարել նույնը կատարեն իրենք՝ բոլոր կանոնները պահպանելով; հաջորդ կարևոր աշխատանքը լաբորատոր կալանի հետ վարվելու ձևերն են՝ ճիշտ օգտվել սեղմակների պտուտակներից, սեղմել կամ թուլացնել թաթն ու օղակը, որ ապակեղենը չկոտորվի)</p> <p><b>3-4-րդ դաս-</b> տարբեր ագրեգատային վիճակում գտնվող նյութերի այրման ռեակցիաների դիտարկում և համեմատում՝ լուցկու(փայտի), մագնեզիումի(հրավառություն), էթիլսպիրտի, մոմի, հեղուկ գազի, ջրածնի(պայթյունով), բացատրել բոցի կառուցվածքը; սովորողները գրի են առնում իրենց դիտարկումները</p> <p><b>5-6-րդ դաս- ինքնուրույն գործնական աշխատանք՝</b> բնութագրել ցուցադրված նյութերի (թորած ջուր, էթիլսպիրտ, սոդա, կավիճ, շաքար, պղինձ, երկաթ, ծծումբ, ֆոսֆոր, ֆիզիկական հատկությունները՝ օգտվելով տեղեկատուներից(տպագիր կամ համապատասխան սայթերից), նշել նաև ֆիզիկոքիական հատկությունները(եթե կան), կիրառումը, դասակարգել՝ պարզ և բարդ, մետաղներ և ոչմետաղներ, անօրգանական և օրգանական; աշխատանքը շարունակել տանը՝ բնութագրել կենցաղում կամ այլուր օգտագործվող անօրգանական և օրգանական նյութերը; կատարած աշխատանքը ներկայացնել համակարգված՝ աղյուսակի տեսքով</p> <p><b>7-8-րդ դաս-</b> լաբորատոր փորձեր պարզել այն էական հատկանիշները, որոնցով տարբերվում են ֆիզիկական և քիմիական երևույթները՝ մոմի հալվելը և այրվելը, կավիճի մանրացնելը և վրան աղաթթու լցնելը, ջրածնի ստացումը և պայթեցնելը, ամոնիումի երկքրոմատից «բլուրի» պատրաստումը և քայքայումը՝ «հրաբուխ», պղնձի(II) հիդրօքսիդի դոնորի ստացումը; սովորողները դիտարկում և բնութագրում են երևույթները, լրացնում աղյուսակը:</p>
<p><b><u>Անհատական ուսումնական նախագծեր</u></b></p>	<p><b>4 ժամ- Ինքնուրույն գործնական աշխատանքներ</b> «Մաքուր նյութերի ստացումը և մաքրության հիմնավորումը՝ խտության, հալման կամ եռման ջերմաստիճանով, շերտավոր քրոմատագրությամբ».</p> <ol style="list-style-type: none"> <li>1) տարբեր ֆիզիկական եղանակներ կիրառելով ստանալ թորած ջուր, էթիլսպիրտ, ացետոն, կերակրի աղի բյուրեղիկներ</li> <li>2) քիմիական փոխարկումներով ստանալ պղնձի(II) քլորիդի բյուրեղներ՝ առնվազն երկու տարբեր եղանակներով (առաջադրանքը օժտված սովորողների համար)</li> </ol>
<p><b><u>Ուսուցման արդյունքներ. Նախագծի նպատակն է իրականացնել հետևյալ չափորոշիչային պահանջները</u></b></p>	<ul style="list-style-type: none"> <li>❖ Գիտի լաբորատորիայում աշխատանքի և անվատանգության կանոնները ուտիչ, այրվող, շուտ բռնկվող, թունավոր նյութերի հետ աշխատելիս, նաև առօրյա կյանքում օգտագործվող նյութերի հետ</li> <li>❖ Ծանոթ է լաբորատոր սարքերին, սպիրտայրոցի կառուցվածքին և ամանեղենին</li> <li>❖ Բնութագրում է և նկարագրում նյութերի ֆիզիկաքիմիական հատկությունները</li> <li>❖ Տարբերում է ֆիզիկական և քիմիական երևույթները</li> <li>❖ Բաժանում է խառնուրդները՝ ստանում մաքուր նյութեր և հիմնավորում նյութի մաքրությունը ըստ նրա խտության, եռման, հալման ջերմաստիճանի, քրոմատագրությամբ</li> <li>❖ Գիտակցի դիտարկելու, վերլուծելու, զննելու, մտահանգումներ</li> </ul>

	<p>կատարելու անհրաժեշտությունը</p> <ul style="list-style-type: none"> <li>❖ Ծրագրում և կատարում է քիմիական փորձ և ստացված տվյալներն օգտագործում եզրակացությունների համար</li> </ul>
<p><b>Ուսուցման միջոցներ Տպագիր և մեդիագրականություն</b></p>	<p><a href="http://www.him.1september.ru">http://www.him.1september.ru</a>, <a href="http://hemi.wallst.ru">http://hemi.wallst.ru</a> / <a href="http://www.alhimik.ru">http://www.alhimik.ru</a>  <a href="http://www.informica.ru/text/database/chemistry/start.html">http://www.informica.ru/text/database/chemistry/start.html</a>  <a href="http://www.schoolchemistry.by.ru">http://www.schoolchemistry.by.ru</a> , <a href="http://www.chemnet.ru/rus/elbibch.html">http://www.chemnet.ru/rus/elbibch.html</a>  <a href="http://www.teleschool.spb.ru">http://www.teleschool.spb.ru</a> ,  <a href="http://www.informika.ru/trxt/inftech/edu/edujava/">http://www.informika.ru/trxt/inftech/edu/edujava/</a> <a href="http://www.teleschool.spb.ru">http://www.teleschool.spb.ru</a>  <a href="http://www.chemistry.bsu.by/abc/">http://www.chemistry.bsu.by/abc/</a> <a href="http://c-books.narod.ru">http://c-books.narod.ru</a>  <a href="http://www.mendeleev.nw.ru/solutions/index.html/">http://www.mendeleev.nw.ru/solutions/index.html/</a>  <a href="/www.pandia.ru/text/77/389/24524.php/">/www.pandia.ru/text/77/389/24524.php/</a></p>
<p><b>Գնահատման մեթոդիկան</b></p>	<p>Գնահատվում է սովորողի գործնական աշխատանք կատարելու համար անհրաժեշտ պատրաստվածությունը, ինքնուրույն պլանավորում է և հավաքում անհրաժեշտ սարքավորումները փորձեր կատարելու համար՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի բոլոր կանոնները: Ճիշտ է կատարում մեկնաբանությունը, ամբողջական ձևակերպում է վերջնական եզրակացությունը, կատարում է բազմակողմանի վերլուծություններ, ընդհանրացումներ և ցուցաբերում է ստեղծագործական մոտեցում: Իր տեսակետը ձևակերպում է և հիմնավորում գիտական փաստերով, օրենքներով կամ օրինաչափություններով՝ օգտվելով տարբեր սկզբնաղբյուրներից, նաև իր փորձից, ունակություններից: Սովորողը.</p> <ul style="list-style-type: none"> <li>❖ դիրքորոշում ունի՝ ես կարծում եմ...</li> <li>❖ հիմնավորում է՝ որովհետև....</li> <li>❖ բերում է օրինակներ....</li> <li>❖ եզրակացնում է՝ այդ պատճառով...</li> </ul> <p>Սովորողը գնահատվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>🌟 մինչ նախագծի վրա աշխատելը՝ մնացորդային գիտելիքները, կարողությունները և հմտությունները</li> <li>🌟 երբ աշխատում է նախագծի վրա, պատասխանում է հարցերին և կատարում է առաջադրանքները՝ թեմատիկ գիտելիքի ստուգումներ</li> <li>🌟 ավարտել է նախագծի վրա աշխատելը՝ անհատական-հետազոտական աշխատանքի ներկայացում; ամփոփիչ թեստ</li> </ul>
<p><b>10-3 Նախագծի անվանումը</b></p>	<p><b>Ատոմի կառուցվածքը: Քիմիական տարրերի պարբերական օրենքը և համակարգը</b></p>
<p><b>Նախագծի ենթաթեմաները և կարճ բովանդակությունը</b></p>	<p>Ատոմամոլեկուլային ուսմունք: Բաղադրության հաստատունության օրենքը: Ատոմի բարդ կառուցվածքն ապացուցող փորձարարական տվյալները: Ատոմի ժամանակակից քվանտամեխանիկական մոդելը: Ատոմը կազմող տարրական մասնիկները: Ատոմի միջուկի կառուցվածքը: Իզոտոպներ: Միջուկային փոխարկումներ: Ատոմի զանգվածային թիվը: Ատոմների էլեկտրոնային թաղանթների կառուցվածքը, էլեկտրոնային բանաձևեր, s-, p-, d-, f- տարրեր: Քիմիական տարրերի պարբերական օրենքը: Ատոմի հատկությունները՝ շառավիղ, իոնացման էներգիա, խնամակցություն էլեկտրոնի հանդեպ, հարաբերական էլեկտրաբացասականություն, վալենտականություն, օքսիդացման աստիճան: Դ.Ի.Մենդելևի քիմիական տարրերի պարբերական</p>

	<p>համակարգը որպես պարբերական օրենքի գրաֆիկական պատկեր՝ պարբերության համարի, կարգաթվի և խմբի համարի ֆիզիկական իմաստները:</p>
<p><b>Ուսումնական առարկան, բաժինը</b></p>	<p>Քիմիա, ընդհանուր քիմիա</p>
<p><b>Սովորողների տարիքը, նախագիծը իրականացնելու ժամանակահատվածը</b></p>	<p>14,15 տարեկան, 12 ժամ, երեք շաբաթ</p>
<p><b><u>Ուսուցման արդյունքները.</u></b> <b><i>Նախագծի նպատակն է իրականացնել հետևյալ չափորոշիչային պահանջները</i></b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Գիտենա ատոմի բարդ կառուցվածքն ապացուցող փորձնական տվյալները՝ քիմիական և ֆիզիկական</li> <li>• Հասկանա և բացատրի նյութի բաղադրության հաստատունության օրենքը (նյութի որակական և քանակական բաղադրությունը)</li> <li>• Որոշի ցանկացած ատոմի բաղադրությունը՝ միջուկի լիցքը(պրոտոնների թիվը), նեյտրոնների թիվը և տարրի ատոմի զանգվածային թիվը, իզոտոպների բաղադրությունը</li> <li>• Գրի միջուկային փոխարկումների հավասարումները</li> <li>• Պարզաբանի քիմիական տարրերի պարբերական օրենքը որպես բնության հիմնարար օրենքներից մեկը՝ տարրերի հատկությունների պարբերական փոփոխությունը պարբերություններում և խմբերում</li> <li>• Հիմնավորի տարրերի վալենտային հնարավորությունները և միացություններում որոշի ատոմների օքսիդացման աստիճանները</li> <li>• Կազմի ատոմների էլեկտրոնային կոնֆիգուրացիաները՝ կիրառելով էլեկտրոնային շերտերի և օրբիտալների լրացման կանոնները</li> <li>• Դասակարգի s-, p-, d- և f- տարրերը և տարրերի d- և f- տարրերի ատոմների կառուցվածքների առանձնահատկությունները</li> <li>• Բնութագրի ատոմում ցանկացած էլեկտրոն ըստ քվանտային թվերի՝ n, l, m<sub>l</sub>, m<sub>s</sub></li> <li>• Բացատրի քիմիական տարրերի պարբերական համակարգն ըստ ատոմի կառուցվածքի նորագույն պատկերացումների, պարբերության համարի, կարգաթվի և խմբի համարի ֆիզիկական իմաստները:</li> </ul>
<p><b><u>Ուսուցման միջոցներ.</u></b> <b>Տպագիր և մեդիագրականություն</b></p>	<p><a href="http://www.him.1september.ru">http://www.him.1september.ru</a>, <a href="http://hemi.wallst.ru">http://hemi.wallst.ru</a> / <a href="http://www.alhimik.ru">http://www.alhimik.ru</a> <a href="http://www.informica.ru/text/database/chemy/start.html">http://www.informica.ru/text/database/chemy/start.html</a> <a href="http://www.schoolchemistry.by.ru">http://www.schoolchemistry.by.ru</a> , <a href="http://www.chemnet.ru/rus/elbibch.html">http://www.chemnet.ru/rus/elbibch.html</a> <a href="http://www.teleschool.spb.ru">http://www.teleschool.spb.ru</a> , <a href="http://www.informika.ru/trxt/infec/edu/edujava/">http://www.informika.ru/trxt/infec/edu/edujava/</a> <a href="http://www.teleschool.spb.ru">http://www.teleschool.spb.ru</a> <a href="http://www.chemistry.bsu.by/abc/">http://www.chemistry.bsu.by/abc/</a> <a href="http://c-books.narod.ru">http://c-books.narod.ru</a> <a href="http://www.mendeleev.nw.ru/solutions/index.html/">http://www.mendeleev.nw.ru/solutions/index.html/</a> <a href="http://www.pandia.ru/text/77/389/24524.php/">http://www.pandia.ru/text/77/389/24524.php/</a></p>
<p><b><u>Ուղղորդող եղյակ հարցերը.</u></b> <b>🚩 Գլխավոր հարցեր →</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>🚩 Ինչպիսի՞ գիտական տվյալներով (ֆիզիկական և քիմիական) կհիմնավորեք ատոմի բարդ կառուցվածքը</li> <li>🚩 Ինչպե՞ս է զարգացել ատոմի կառուցվածքի դասական տեսությունը, ինչպիսի՞ մոդելներ են առաջարկվել</li> <li>🚩 Ինչո՞ւ տարրերի և նրանց միացությունների հատկությունները պարբերաբար կրկնվում են և կախված են տարրի ատոմի միջուկի</li> </ul>

	լիցքից
<ul style="list-style-type: none"> <li>• Թեմատիկ հարցեր--&gt;</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Ինչո՞ւ նյութերում ատոմները միացած են որոշակի զանգվածային հարաբերությամբ</li> <li>• Ո՞րն է պարբերության համարի, կարգաթվի և խմբի համարի ֆիզիկական իմաստները</li> <li>• Ի՞նչ սկզբունքներով են ատոմում էլեկտրոնները լրացվում</li> <li>• Ինչպե՞ս կրնաթագրեք էլեկտրոնի վիճակը ատոմում</li> <li>• Որո՞նք են ատոմում վալենտային էլեկտրոնները, ինչո՞ւ</li> <li>• Ինչո՞ւ են տարրերը դասակարգվում s-, p-, d-, f- տարրերի</li> <li>• Ինչպե՞ս է փոխվում տարրերի մետաղական և ոչմետաղական հատկություններ պարբերություններում և խմբերում՝ կարգաթվի մեծացմանը զուգընթաց</li> <li>• Ի՞նչ է իոնացման էներգիան՝ I, խնամակցությունը էլեկտրոնի հանդեպ՝ E, հարաբերական էլեկտրաբացասականությունը՝ X</li> </ul>
<ul style="list-style-type: none"> <li>✧ Ըստ էության հարցեր--&gt;</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>✧ Ինչպիսի՞ երևույթ է միջուկային ռեակցիան՝ ֆիզիկական, թե՞ քիմիական</li> <li>✧ Ինչո՞ւ տարրի գլխավոր տարրերիչ հատկությունը զանգվածը չէ</li> <li>✧ Ո՞ր տարրի ատոմն է ստացվում <sup>235</sup>Np ռադիոակտիվ իզոտոպի β-տրոհման արդյունքում</li> <li>✧ Ի՞նչ է էներգետիկ մակարդակը, ենթամակարդակը, ատոմային օրբիտալը</li> <li>✧ Ինչո՞ւ են տարրերի շառավիղները պարբերությունում կարգաթվի մեծացմանը զուգընթաց փոքրանում</li> <li>✧ Ո՞րն է ծանր ջրի բաղադրությունը, որտե՞ղ է կիրառվում</li> <li>✧ Առավելագույնը քանի՞ էլեկտրոն կարող է պարունակվել չորրորդ էներգիական մակարդակում (n=4)</li> <li>✧ Ինչպե՞ս էլեկտրոնի օգնությամբ որոշել էլեկտրոնի լիցքը</li> <li>✧ Ինչպե՞ս են փոխվում ակալիական մետաղների հիդրօքսիդների հիմնային հատկությունները կարգաթվի մեծացմանը զուգընթաց</li> </ul>
<p><b><u>Տեղեկություններ նախագծի վերաբերյալ</u></b></p>	<ul style="list-style-type: none"> <li>❖ Նախագծին մասնակցելու համար յուրաքանչյուր սովորողի նախնական գիտելիքները, կարողություններն և հմտությունները «ստուգվում է» մտազրոհի մեթոդով կամ թեստային առաջադրանքով</li> <li>❖ Սովորողը պիտի իմանա 7-9 դասարանների նախնական գիտելիքները ատոմի բարդ կառուցվածքի, «մոլորակային մոդելի» վերաբերյալ, որոշի ցանկացած ատոմի բաղադրությունը, սահմանի քիմիական տարր, էլեկտրոնային թաղանթ, կազմի պարբերական համակարգի 1-ից 20-րդ տարրերի ատոմների էլեկտրոնային սխեմաները</li> <li>❖ Բնագիտությունից իմանա ատոմի մոլորակային մոդելը, ֆիզիկայից ատոմը կազմող տարրական մասնիկները և փոխազդեցության ուժերը նրանց միջև</li> <li>❖ Ցուցաբերի հետաքրքրասիրություն հատկապես ուսումնասիրվող նոր թեմաների նկատմամբ, տիրապետի նորագույն տեխնոլոգիաներին և ինքնուրույն փնտրի տեղեկություններ համացանցում</li> </ul>



	<p align="center"><b><u>Ուսումնառության ընթացքը.</u></b></p> <p><b>1-2 դաս-</b> Ատոմա-մոլեկուլային ուսմունքի զարգացման էտապները և գիտական հիմնավորումները և՛ քիմիայից և՛ ֆիզիկայից՝ փորձարարական տվյալներով , իհարկե, գիտնականների կողմից կատարված, գիտական տեսակետների հիմնավորումները, սովորողներին հայտնել, որ այդ տեսության վրա գիտական հետազոտությունները շարունակական են, քանի որ <b>դեռևս շատ հարցեր բաց են</b>, օրինակ, ատոմը կազմող տարրական մասնիկների բնույթը, հատկությունները, բաժանելիությունը ( ներկայումս հայտնագործված են մոտավորապես 300 մասնիկ), նշել, որ էլեկտրոնը ևս բաժանելի է (1998թ. Նոբելյան մրցանակ այդ հայտնագործության համար), չնայած մենք դեռևս ասում ենք՝ ատոմը կազմող տարրական մասնիկներ (ամենափոքր), իսկ ատոմի ժամանակակից սահմանումն է՝ <b>ատոմը տարրական մասնիկների փոխազդեցության արդյունքն է:</b> Սովորողներին հանձնարարել ինքնուրույն փնտրել նոր տեղեկություններ ատոմը կազմող տարրական մասնիկների վերաբերյալ:</p> <p><b>3-4 դաս-</b> Սովորողները ներկայացնում են իրենց հիմնավորումները ատոմի բարդ կառուցվածքի մասին, բնութագրում ատոմը կազմող տարրական մասնիկները՝ էլեկտրոն, պրոտոն, նեյտրոն, որոշում ատոմների բաղադրությունը՝ միջուկ(պրոտոններ և նեյտրոններ), իզոտոպներ, ատոմի զանգվածային թիվը՝ <math>A = N + Z</math> :</p> <p><b>5-6 դաս-</b> էլեկտրոնի վիճակը ատոմում՝ քվանտային թվերը՝ <math>n, l, m, m_s</math>, էլեկտրոնի երկակի՝ ալիքամասնիկային բնույթը, ատոմային օրբիտալներ, էլեկտրոնային թաղանթ և էլեկտրոնային շերտ՝ էներգիական մակարդակներ և ենթամակարդակներ, էլեկտրոնների բաշխումն ըստ էներգիական մակարդակների և ենթամակարդակների ըստ նվազագույն էներգիայի, Պաուլի սկզբունքի և Հունդի կանոնի և Կլեյկովսկու 1 և 2 կանոնները:</p> <p><b>7-8 դաս-</b> Ղ.Բ.Մենդելեևի քիմիական տարրերի պարբերական համակարգը և ատոմի կառուցվածքը՝ պարբերության համարի, կարգաթվի և խմբի համարի ֆիզիկական իմաստները: s-, p-, d-, f- տարրեր:</p> <p><b>9- 10 դաս-</b> Քիմիական տարրերի պարբերական օրենքը, տարրերի հատկությունների պարբերական փոփոխությունը՝ ատոմի շառավիղ, իոնացման էներգիա, ինամակցություն էլեկտրոնի հանդեպ, հարաբերական էլեկտրաբացասականություն, տարրերի ատոմների վալենտային էլեկտրոնները, վալենտականություն և օքսիդացման աստիճան: Քննարկել օրինակներ:</p> <p><b>11- 12 դաս-</b> Սովորողները ներկայացնում են անհատական-հետազոտական աշխատանքները, գիտելիքի ստուգում՝ ամփոփիչ թեստ:</p>
<p><b><u>Անհատական ուսումնական նախագծեր</u></b></p>	<ul style="list-style-type: none"> <li>❖ Ատոմի բարդ կառուցվածքի փորձարարական հիմնավորումները քիմիայից</li> <li>❖ Ատոմի բարդ կառուցվածքի փորձարարական հիմնավորումները ֆիզիկայից</li> <li>❖ Ատոմը կազմող տարրական մասնիկների բնութագրումը</li> <li>❖ Օրգանական և անօրգանական ծագում ունեցող հնագույն գտածոների տարիքի որոշման եղանակները</li> <li>❖ Ռենտգենյան ճառագայթների և ռադիոակտիվ իզոտոպների</li> </ul>

«Մխիթար Մեթաստացի» կրթահամալիր  
Ստեղծողի մտքի դայրոց. անհատի կրթական պատվեր

	<p>կիրառությունը հիվանդությունների ախտորոշման ու բուժման նպատակով</p> <ul style="list-style-type: none"> <li>❖ Կենսաբանական պոլիմերների վրա ռադիոակտիվ ճառագայթների ազդեցությունը</li> </ul>
Գնահատման մեթոդիկան	<p>Գնահատվում է սովորողի մտածելու, համադրելու, տարբեր տեսակետներ հայտնելու, իր տեսակետը ձևակերպելու և գիտական փաստերով, օրենքներով, օրինախափություններով հիմնավորելու՝ օգտվելով տարբեր սկզբնաղբյուրներից, նաև իր փորձից, ունակություններից.</p> <ul style="list-style-type: none"> <li>✚ մինչ նախագծի վրա աշխատելը</li> <li>✚ նախագծի վրա աշխատելիս. հասկանում է խնդիրը, մշակում է լուծման տարբերակները և պլանավորում է իր գործողությունները, կատարում է առաջադրանքները</li> <li>✚ սովորողները ավարտել են նախագծի վրա աշխատելը և ներկայացնում են քննարկման</li> <li>✚ կատարել են ընթացիկ և ամփոփիչ թեստային առաջադրանքները:</li> </ul>

<b>10-4</b> Նախագծի անվանումը	<b>ՆՅՈՒԹԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ: ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱՊ:</b>
Նախագծի ենթաթեմաները և կարճ բովանդակությունը	Քիմիական կապի տեսակները: Էլեկտրոնային օրբիտալների հիբրիդացում: Մոլեկուլի տարածական կառուցվածքը: Նյութի պինդ, հեղուկ, և գազային վիճակները: Նյութերի գազային վիճակը: Դիսպերս համակարգեր՝ կոլոիդ համակարգեր, կախույթներ և իսկական լուծույթներ: Բյուրեղային և ամորֆ նյութեր: Օրգանական նյութերի կառուցվածքային տեսությունը:
Թեմայի հիմնավորումը, նպատակը	<p>Տեսական քիմիայի հիմքը կազմում է քիմիական կապի մասին ուսմունքը: Բնության մեջ քիմիական տարրերից մեկուսացված (ատոմային) վիճակում հանդիպում են միայն ազնիվ գազերը: Մնացած տարրերի ատոմներն առաջացնում են բարդ համակարգեր՝ մոլեկուլներ, իոններ, ռադիկալներ և բյուրեղներ: Քիմիայում գործում է դասական եռանկյունին՝ <b>նյութի բաղադրությունը-կառուցվածքը-հատկությունները</b>, իսկ եռանկյան կենտրոնում գտնվում է <b>քիմիական կապի բնույթը</b> ատոմների միջև: Սովորողները կլիմանան.</p> <ul style="list-style-type: none"> <li>❖ Ինչու մոլեկուլները ավելի կայուն են, քան մեկուսացված ատոմները</li> <li>❖ Քիմիական կապի բնույթը ատոմների միջև</li> <li>❖ Մոլեկուլում քիմիական տարրի առաջացրած կապերի թիվը</li> <li>❖ Կովալենտային կապի անկյունը</li> <li>❖ Մոլեկուլը բևեռային է, թե ոչբևեռային</li> <li>❖ Ինչպես են առաջանում կրկնակի կապերը</li> </ul>
Ուսումնական առարկան, բաժինը	Քիմիա, ընդհանուր քիմիա
Սովորողների տարիքը, դասարանը	14, 15 տարեկան, 10-րդ դասարան(մասնագիտական խորացված ուսուցում)

<p><b>Նախագիծը իրականացնելու համար անհրաժեշտ ժամանակը</b></p>	<p>4 շաբաթ, 16 ժամ</p>
<p><b><u>Ուսուցման արդյունքները.</u></b> <b><i>Նախագիծը իրականացնելու է հետևյալ չափորոշիչային պահանջները.</i></b></p>	<ul style="list-style-type: none"> <li>❖ Տարբերում է քիմիական կապի տեսակները և առաջացման մեխանիզմները</li> <li>❖ Որոշում է քիմիական տարրերի օքսիդացման աստիճանը և վալենտականությունը միացություններում, բացատրում դրանց տարբերությունը և նմանությունը</li> <li>❖ Բացատրում է մոլեկուլի բևեռայնության կախվածությունը կապի բևեռայնությունից և մոլեկուլի տարածական կառուցվածքից</li> <li>❖ Գիտի բյուրեղացանցերի տեսակները՝ ատոմային, մետաղական, մոլեկուլային և իոնային</li> <li>❖ Բացատրում է քիմիական կապի բնույթը օրգանական նյութերում և մոլեկուլների տարածական կառուցվածքը հիբրիդացման տեսությամբ</li> <li>❖ Պատկերում է մոլեկուլների կառուցվածքային բանաձևերը</li> <li>❖ Հավաքում է մոլեկուլների գնդիկա-ձողիկային մոդելները</li> <li>❖ Մեկնաբանում է միջմոլեկուլային փոխազդեցության դերը մի ագրեգատային վիճակից մյուսին անցնելիս</li> <li>❖ Կիրառում է ստացած գիտելիքները բացատրելու տարբեր քիմիական երևույթները և նյութերի քիմիական հատկությունները</li> <li>❖ Օգտագործում է տեղեկատվության տարբեր աղբյուրներ, տպագիր և մեդիամիջոցներ, ինքնուրույն ձեռք բերում նոր գիտելիքներ՝ ներկայացնելու համար</li> </ul>
<p><b><u>Նախագծի ակնկալվող արդյունքները.</u></b></p>	<p>Սովորողը պետք է իմանա, հասկանա, բացատրի.</p> <ul style="list-style-type: none"> <li>➤ քիմիական կապի առաջացման սկզբունքները, էլեկտրոնային ամպերի փոխձածկ՝ անցում կայուն էներգիական վիճակի</li> <li>➤ բացատրում է կովալենտային կապի առաջացման փոխանակային և դոնորակցեպտորային մեխանիզմները, տեսակները՝ բևեռային և ոչբևեռային, <math>\sigma</math>- և <math>\pi</math>- կապեր</li> <li>➤ տարրի ատոմի փոփոխական վալենտականություն ցուցաբերելու պատճառները</li> <li>➤ գիտի կովալենտային կապի հատկությունները՝ կապի էներգիան, երկարությունը, իոնացման աստիճանը, հազեցվածությունը, անկյունը</li> <li>➤ տարբերում է կապի բևեռայնությունը մոլեկուլի բևեռայնությունից</li> <li>➤ որոշում է միացության մեջ տարրերի ատոմների վալենտականությունը, օքսիդացման աստիճանը, հասկանում է դրանց տարբերությունը</li> <li>➤ կանխագուշակում է նյութերի հատկությունները տեսական գիտելիքների հիման վրա</li> <li>➤ բացատրում է մետաղական կապի առաջացման մեխանիզմը, մետաղական բյուրեղացանցի ձևավորումը, մետաղների հատկությունների նմանությունը</li> <li>➤ պատրաստում է լուծույթներ և դրանցում որոշում լուծված նյութի կոնցենտրացիան՝ զանգվածային, մոլային բաժինները, մոլային կոնցենտրացիան</li> </ul>

